ՆՈՐ-ԴԱՐ

№ 84 ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ Չորեքշաբթի 4 Յունիսի 1886 Չորեքշաբթի 4 Յունիսի ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ № 84

Տարեկան 10 րուբլի, վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 ր. 50 կ.
Համարը 5 կոպէկ։
Բաժանորդ գրվում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Редакція «Норъ-Даръ»
կամ Tiflis. Rédaction «Nor-Dar».

Խմբագրատունը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուներով։
Յայտարարութիւնների բառին 2 կ., ռեկլամների համար՝ կրկնապատիկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քրոնիկոն.—Լուրեր։
Թղթակցութիւններ.—Սուրամ. Շուշի։
Քաղաքական.—Լուրեր։
Խառն լուրեր։
«Նոր-Դար»-ի հեռագիրներ։
Բանասիրական.—Փլատի ձեռքը։
Յայտարարութիւններ։

Յունիսի 1-ից «Նոր-Դար»-ին բաժանորդ են գրվում և վճարում են 6 րուբլի։ Թիֆլիսում դիմում են խմբագրատուն, քաղաք. պոստատան ետև՝ Տրոյիցկի փողոց, № 9-ը։

Օտար քաղաքներից գրում են Тифлисъ. Редакція «Норъ-Даръ».

ՔՐՈՆԻԿՈՆ

Ներսիսեան դպրանոցում հարցաքննութիւնները արդէն վերջացան և բոլոր ուսուցիչներն էլ արձակուեցան իրենց պաշտօններից։ Ինչպէս իմանում ենք, եկող ուսումնական տարուց կազմակերպուելու է ուսուցչական նոր խումբ թէ հին և թէ նոր ուսուցիչներից։

—

Կիրակի յունիսի 1-ին քանի մի հայ կօշկակարներ Մուշտայիդում լաւ քէֆ անելուց և արբենալուց յետոյ փախչում են, թողնելով իրենցից մինին ծախսերին պատասխանատու. վերջինս չունենալով այդքան առձեռն դրամ, գրաւ է դնում իւր նոր չուխան և կատաղած գնալով տունը յարձակվում է փախչող ընկերների վերայ. մինին սպանում է, երկրորդին ծանր կերպով վիրաւորում, իսկ երրորդին թեթև վէրք պատճառում. Մարդասպանը ուղարկուած է բանտ։

—

Մի քանի օր առաջ մենք լսել էինք և ինչպէս այժմ էլ գրում են տեղական լրագիրները ինչպէս լուր, որ Անտոն Դօրղանեանի գործի մասին Թիֆլիսի դատաստանական պալատի կայացրած վճիռը կառավարիչ Սենատը ջնջել է։

—

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ մեզ գրում են, որ այնտեղ ցանքերը առատ են, եղանակը կէս գարնանային է և կէս ամառնային։

—

Հրատարակուած նորագոյն վիճակագրութեան նայելով Կ. Պօլսի 874,562 հոգի ընդհանուր ազգաբնակութիւնից 149,550 հոգի հայեր են, որոնցից 83,770 հոգի արական սեռի, իսկ 65,720 հոգի իգական սեռին են պատկանում։

—

Մայիսի վերջերում Ժընևայի կանտոնական խորհրդի նիստում Ժօրժ Ֆավօն պատգամաւորը հիւանդութեան դէմ փոխադարձ ապահովութեան մասին մի հետաքրքիր օրինագիծ առաջարկեց։ Այս օրինագծի էութիւնը կայանում է նրանում, որ շվէյցարական երկու սեռի բոլոր քաղաքացիները, որոնք բնակվում են Ժընևեան կանտօնում, պարտաւոր են անդամ գրուելու կառավարութեան կողմից հաստատուած հիւանդութեան դէմ ապահովութեան ընկերութեանը, որի ամեն մի հիւանդացող անձի կը տայ մի օրուայ նպաստ։ Շվէյցարական բոլոր քաղաքացիները պարտաւորեալ անդամ են գրվում յիշեալ ընկերութեանը, որի վճարները կը պահանջուին և կը ժողովուին հարկի ձևով։ Եթէ մնաս գոյանայ, այն ժամանակ հարկի լրացուցիչ վճարը կը բաժանուի բոլոր անդամների վերայ։ Բացի այս օրինագծից, առաջարկուեցան և մի քանի ուրիշները, որոնցով կամենում են, որ կառավարութիւնը խրախուսէ և նպաստներ տայ նաև հիւանդութիւնից ապահովեցնող մասնաւոր ընկերութիւններին։

—

«Նոր-Դար»-ի 57 համարի քրոնիկոնի բաժնում հրատարակուեցաւ մի լուր, որ վերաբերում էր Թիֆլիսի նահանգական դատարանում քննուող մի քրէական դատի. Գործը մի 132 գլուխ ոչխարի յափշտակութեան էր վերաբերում, որ տեղի էր ունեցել Լօռու գաւառում։ Այդ գործի համար Թիֆլիսի նահանգական դատարանը 120 վկաներ էր կանչել։

Այդ մասին հրատարակուած լուրի մանրամասնութիւնից անբաւական՝ դատուողների մէկ կողմին պատկանող Ջալալ-օղլեցի Մ. Սեանը մի բաւական ընդարձակ նամակ է ուղարկել մեզ։ Մենք նամակը չենք հրատարակում, այլ այդ գործի մասին նահանգական դատարանի գործի վճիռն ենք մէջ բերում այդ նամակից, որ և գործի էական մասն է։ Դատարանի վճռով Սահակեանը անմեղ է դուրս գալիս, իսկ Գեաուղեան գիւղի բնակիչ Մնացական Գեմիրխանեանը յանցաւոր։ Այս վերջինս դատապարտուած է 8 ամիս ժամանակով աշխատանքի՝ բանտային բանուորների բաժնում և պարտաւոր է վճարել Սահակեանի օգտին 5250 րուբլի և դատաստանական ծախքերը։ Այս տեղեկութիւնը կարող է աւելի հետաքրքրել լօռեցիներին։

—

Ներսիսեան դպրանոցի տեսուչ պ. Արշակ Նահապետեանը յունիսի 3-ին երեքշաբթի գիշերուայ գնացքով ճանապարհ ընկաւ դէպի ս. Էջմիածին։ Ինչպէս հաստատ աղբիւրից իմանում ենք, պ. Ա. Նահապետեանը բոլորովին թողնում է Ներսիսեան դպրանոցի տեսչական պաշտօնը, Թիֆլիսը, ինչպէս և աշխարհային կեանքը։ Նա կուսակրօնութիւն ընդունելով վարդապետ պիտի ձեռնադրուի։

—

Խմբագրութիւնս ստացաւ պ. Բագրատ Միրիմանեանից նրա Ծաղկեփունջ անունով հրատարակութիւնների № 3, «Ս. Էջմիածինը» վերնագրով, 22 երեսներից բաղկացած գրքոյկը, որ տպուած է Թիֆլիսում, պ. Մ. Ռօտինեանցի տպարանում, ներկայ 1886 թուին. Յիշեալ գրքոյկի բովանդակութիւնը արտատպուած է «Դպրոց» մանկավարժական ամսագրից, որ երբեմն հրատարակում էր ս. Գայիանէի վանահայր հանգուցեալ Վահան ծ. վ. Բաստամեանը։

Գրքոյկի հրատարակիչ պ. Միրիմանեանը մի քանի ժամանակից ի վեր պարապում է մանկական ընթերցանութեան գրքեր հրատարակելով, և բացի այս գրքոյկից նա արդէն հրատարակած է երկու ուրիշ գրքոյկներ։

—

Արժ. Ղազարոս քահանայ Յովսէփեանը դիմելով «Նոր-Դար»-ի միջնորդութեան, խնդրում է այն անձանց՝ որոնց մօտ գտնվում է «Քնար մանկական» երգարանի բաժանորդագրութեան թերթերը, բաժանորդագրների հետ միասին բարեհաճեն շուտով վերադարձնել նրան հետևեալ հասցէով. Тифлисъ—на Авлабарѣ. свящ. Казаросъ Осеньянъ.

—

Այս տարի Ներսիսեան դպրանոցի 6-րդ դասարանից աւարտեցին 12 հոգի։ Լսում ենք, որ այս տարուան աւարտողները նախկին տարիների աւարտողներից անհամեմատ թոյլ են։

—

Լսում ենք, որ ձիաքարշ երկաթուղու վարչութիւնը Ռուսիայից բերել է տալ նոր ձևի վագոններ, որոնք բաղկացած են 2 յարկից։ Այդ վագոնները առայժմս կը շրջեն Երևանեան հրապարակից սկսած մինչև Մուշտայիդ։

—

Խմբագրութիւնս ստացաւ պ. Սկայորդուց նրա գրած «Նոր Ցաւ» (մի հասարակ մարդու յիշողութիւններից) վերնագրով, 202 երեսներից բաղկացած գիրքը, որ տպուած է Շուշի քաղաքում, Միրզաջան Մահտեսի-Յակոբեանի տպարանում, ներկայ 1886 թուին։

—

Հաւաստի աղբիւրներից լսում ենք, որ Ներսիսեան դպրանոցի հոգաբարձութիւնը առաջիկայ ուսումնական սեզոնին մտադիր է փակել դպրանոցի երեք նախակրթարանները իւր բաժանմունքներով։

—

Սկսեալ այն ժամանակից, երբ հրատարակուեցաւ ռուս ծխական դպրոցների կանոնադրութիւնը, նկատվում է, որ դպրոցները հետզհետէ աւելանում են։ Վերջին ժամանակում թեմերից և դպրոցական խորհուրդներից ռուս. ս. Սինոդին ուղարկած վիճակագրական տեղեկութիւններից երևում է, որ մինչև 1884 թ. յուն. 13-ը բոլոր ծխական դպրոցները եղել են 3,088, իսկ հասարակ գրել կարդալ սովորեցնելու դպրոցները, 1,459։ Առաջին դպրոցներում երկու սեռի ուսանողները 77,879 էին, իսկ երկրորդ դպրոցներում—27,269։ 1884 թ. յունիսի 13-ից, այսինքն սկսեալ այն օրից, երբ հրատարակուեցաւ Բարձրագոյն հաստատուած «ծխական դպրոցների կանոնադրութիւնը» մինչև 1885 թ. յունուարի 1-ը աւելացան 2007 դպրոցներ, որոնցից 1,167 ծխական են, իսկ 840-ը գրագիտութեան։ Այդ դպրոցներում երկու սեռից ուսանում են 48,845 հոգի (ծխականներում 33,771, իսկ գրագիտութեան դպրոցներում 15,074 հոգի)

Ուրեմն մինչև 1885 թ. յունուարի 1-ը ծխական և գրագիտութեան դպրոցների թիւը եղել է 6,554, իսկ ուսանողները—153,993։

Ս. Սինոդը իւր կարգադրութեան ներքոյ գտնուած գումարից 1885 թ. դպրոցներին տուել է մշտական նպաստ 3,050 ր. (ամենամեծ մշտական նպաստը ստացել է Ղազանի թեմը—1,000 ր.) և միանուագ նպաստ ստացել են Լիտովի և Պօլօցկի թեմերը). բացի դրանից այդ ժամանակի ընթացքում տրուած է դպրոցներին 200063 ր. 18 կոպէկի գրքեր (ամենից շատ ստա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՓԼԱՏԻ ՁԵՌՔԸ

1520 թուականի ամառնային գիշեր էր։ Երկայն և սև վերարկուի մէջ փաթաթուած մի կին գնում էր դէպի Րիալտօ կամուրջը, որ գտնվում է Վենետիկում։ Նրա քայլերը թոյլ էին և անհաւասար՝ նա երբեմն դէսուդէն էր նայում և երկչոտ հայեացքներ ձգում իւր շուրջը։ Հասնելով կամուրջի մէջ տեղը՝ նա կանգ առաւ, սարսափով նայեց Ադրիատիկի պայծառ և կապտագոյն ջրին. յետոյ աչքերը փակեց և ցածրաձայն շշնջալով. «Մնաս բարեաւ, իմ Անտօնիօ», հէնց որ պատրաստվում էր կամուրջի վանդակապատից իրեն ջուրը նետելու, նոյն վայրկենին յանկարծ մի ուժեղ ձեռք կանգնեցրեց նրան իւր տեղը։

—Ջահէլս, մի կործանիր դու քո կեանքը, որ Աստուած պարգևել է քեզ։ Եթէ դու ամբաղդ ես, մտիր ահա այն հարևան եկեղեցին, դո՛ւրս թափիր այնտեղ քո բոլոր վշտերը և շնորհակալութիւն արա Արարչին, որ նա արգելեց քեզ ներկայանալ իւր առաջ՝ առանց իւր հրաւէրի, փաղաքշաբար ասաց անծանօթը։

—Թողէք ինձ, ես պէտք է մեռնիմ—հազիւ կարողացաւ արտասանել աղջիկը. օրօրուելով և անզգայ գլորուեցաւ գետին։

Որպէս զի մինչև տայ նրան շուտով ուշքի գալու՝ անծանօթը բարձրացրեց նրա գլուխը և երեսի քօղը յետ քաշեց։ Նրա դէմքի գծագրութիւնը չքնաղ էր։ Մինչև որ նա տակաւ առ տակաւ ուշքի կը գար, անծանօթը հիացմունքով և զարմացած նայում էր նրան։

Նա հետզհետէ պատմեց նրան, թէ ով էր ինքը, որտեղ էր ապրում և մի քանի մանրամասնութիւններ իւր կեանքից... Նրա պատմութիւնը կարելի է այս մի քանի խօսքի մէջ ամփոփել՝ ժլատ հայր, աղքատ փեսացու, փոխադարձ, բայց անբաղդ սէր։

Մարիամն իզուր էր աղաչում հօրը, որ հարուստ հիւրանոցատէր էր Վենետիկում, ամուսնացնել իրեն գեղեցկատես մակուկավար Անտօնիօ Բարբերիգօի հետ, որ միշտ աշխատում էր «հառաչանքների կամուրջի» տակ գտնվող ջրանցքի վերայ։ Վերջապէս մեր նկարագրած գիշերը նրա հայր Ջիանետտինին այն աստիճան կորցրեց իրեն, որ մի սաստիկ հարուած հասցրեց Մարիամին։ Անպատուած և մինչև սրտի խորքը վիրաւորուած աղջիկը, խելագարի նման դուրս վազեց տանից, և ինչպէս մենք արդէն տեսանք, ուզում էր ինքնասպանութեան զոհ գնալ։

Մարիամին ազատող մարդը տարաւ նրան տուն և աղջկանը յանձնելով հօրը՝ ինքը նստեց հիւրանոցի հասարակաց սենեակի մութ և յետ ընկած անկիւնում։ Ջիանետտինին անարգեց իւր աղջկանը կոշտ ու կոպիտ նախատինքներով և հրամայելով նրան քաշուել իւր սենեակը՝ նա միևնոյն ժամանակ ծածկաբար կասկածաւոր հայեացքներ էր ձգում անկոչ հիւրի վերայ։ Սակայն, վերջինիս պարթև և քաջազնական տեսքը, նրա դէմքի եռանդալից և հաստատուն արտայայտութիւնը թոյլ չէին տալիս հիւրանոցատիրոջը կոպտութեամբ և յանդգնաբար վարուելու նրա հետ։

Այն ժամին, երբ Մարիամը պատրաստվում էր սենեակից դուրս գնալ, դռների մէջ յայտնուեցաւ մի երիտասարդ մակուկավար. Ջիանետտինին իսկոյն առաջ նետուեցաւ։

—Կորիր այստեղից, աղաղակեց նա կատաղաբար, կորիր իմ տանից, մուրացկան դու։

Երիտասարդը տեղից չշարժուեց։

—Վերջացրէ՛ք, հարցրեց նա հանդարտ ձայնով,—ի՞նչու այդպէս խստութեամբ էք վարվում ինձ հետ։ Միթէ դուք երբէք ոչ ոքին սիրած չէք, սինիօր Ջիանետտինի։ Միթէ դուք բոլորովին մոռացել էք ձեր երիտասարդութիւնը։ Միթէ դուք չգիտէք, որ մենք վաղուց է արդէն կրակուած սիրում ենք միմեանց։ Վերջապէս միթէ դուք կ'արգելէք մեզ օրհնել ձեր ծերութիւնը և կը կամենաք, որ մենք արցունքներով ուղենք ձեր ճանապարհը։

—Ես չեմ ուզում, որ իմ թոռներս աղքատներ լինին, կոպտութեամբ պատասխանեց Ջիանետտինին։

—Ի հարկէ դուք հարուստ էք, առարկեց երիտասարդը, բայց ինչը կարող է արգիլել և ինձ հարստանալու։ Համբերութիւնով, հաստատակամութիւնով, պատւով և Արարչի օգնութեամբ շատ բան կարելի է անել։

—Է՛հ, դրանք անմիտ մարդու ցնորքներ են։

—Ամենևին, ասաց Անտօնիօն, սա իսկապէս առողջ և խելացի մտածմունք է։

Լօրենցօ դէ-Մեդիչին վաճառական էր, իսկ Ջիկօմօ Սֆօրցան—հասարակ հովիւ։

Անկիւնում նստած մարդը ամբողջ ժամանակ ուշի ուշով լսում էր խօսակցութիւնը. յետոյ ոտքի կանգնելով նա ձեռքը դրեց Բարբերիգօի ուսին և ասաց. «Ճշմարիտ ես ասում, մակուկավար. համարձակութիւնը քաղաքներ է գրաւում։ Մարիամը քո կինը կը լինի»։

—Երբէ՛ք, գոչեց Ջիանետտինին։

—Պարոն հէչ՛-ոյ, հարցրեց անծանօթը արհամարհանքով, եթէ այս երիտասարդը կարողանար այս րոպէին համրել ձեր առաջ վեց հարիւր ցխինօ *), դուք արդեօք կը դնէ՞ք նրա ամուսնութեանը։

—Աւելորդ է խօսել այն մասին, թէ ինչ կ'անէի ես այդ ժամանակ, միայն

---

*) Ոսկէ դրամ է 4 ր. 50 կ. արժողութեամբ, որ գործ է ածվում Ֆրանսիայում և Սպանիայում։

ցել են Լիտովի և Մինսկի թեմերը) ներկայումս ս. Սինօդը տուել է ծխական դպրոցներին միանւագ 23,400 ր. և 14, 390 ր. 50 կոպէկի գրքեր։ Առաջին տեղը դպրոցների և ուսանողների շատութեամբ բռնում է Կիեվի թեմը (1,002 դպրոց և 36,229 ուսանող) սրանից յետոյ Պատօլսկի թեմն է (814 դպրոց և 21,228 ուսանող), Մինսկի թեմը (661 դպրոց և 12,379 ուսանող), Մագիլեվի (654 դպրոց և 14,634 ուսանող)։ Լիտովսկիի (321 դպրոց և 7,268 ուսանող), Վլադիմիրի (209 դպրոց և 3688 ուսանող), Տվերի (193 դպրոց և 5,411 ուսանող), Վեատսկի (165 դպրոց և 4,981 ուսանող), Կալուգի (139 դպրոց և 3,435 ուսանող) Եկատերինօսլավի (129 դպրոց և 4,129 ուսանող), Վօլինի (112 դպրոց և 2,094 ուսանող), Սամարայի (104 դպրոց և 3,289 ուսանող) ևայլն։

Վերոյիշեալ թւերից երևում է, որ պետութեան արևմտեան թեմերում դպրոցների թիւը աւելի շատ է քան թէ արևելեան թեմերում։

—

ՕԴԵՍՍԱՅԻ գործարանատէրերի և արդիւնաբերողների մէջ, «Одес. Вѣст» լրագրի ասելով, միտք է յղացել կառավարութիւնից թոյլտուութիւն խնդրել եկող տարի Օդեսսայում գիւղատնտեսական և արդիւնաբերական մի ընդարձակ ցուցահանդէս բանալու։

—

ՆՈՒԽՈՒՑ.—Մօտաւորապէս մի 10 օր սրանից առաջ այս տեղ «դարբխանա» անուանուած բազարում մի անկարգութիւն տեղի ունեցաւ, որի եղելութիւնը հետևեալն է։

Ա—ը, ատփճանաւոր Բ—ը և ուսուցիչ Զ—ը խմիչքից առաջացած ուրախ տրամադրութեան մէջ գալիս են բազար և այդտեղից ուզում են կառքով գնալ ման գալու։

Դրանցից առաջինը հրապարակում պատահած առաջի կառապանին հրամայում է վերցնել իրենց կառքը, որի մօտ կանգնած է լինում մի կալուածատիրոջ ծառայ, և արդէն վարձած կառքը. իսկ երբ որ դա ստանում է թէ ծառայից և թէ կառապանից բացասական պատասխան, այն ժամանակ դա բարկանում է կառապանի վերայ, սկսում է հայհոյել դրան բարձր ձայնով. այդ «ղալմաղալի» վերայ մի ակնթարթում դրանց շրջապատում է ամբողջ բազարի ժողովուրդը, այդ տեղ ներկայ է լինում նոյնպէս նուխեցի Մ. Ա—ը, որ տեսնելով դրանց անկարգութիւնները ծիծաղում է, իսկ Զ—ը բարկանալով դրա Ա—ի վերայ (իբր վիրաւորանք համարելով դրա ծիծաղը) սկսում է նախ ռուսերէն անմարդավայել կերպով հայհոյել և ապա շարունակել վրացերէն լեզւով թափել բերանից անպատկառ, միմիայն կինտօներին վայել խօսքեր։

Պ. Մ. Ա—ը Զ—ի իրեն պատճառած վիրաւորանքների և անպատւութեան դէմ գանգատ է տուել հաշտարար դատաւորին։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՍՈՒՐԱՄ 26 մայիսի.—Թերևս մեր ընթերցողին յայտնի է, թէ ինչ դժւարութիւն էր կրում Սուրամի ժողովուրդը մի երկաթեայ կամուրջ չունենալով. փայտեայ հասարակ կամուրջը ոչ միայն երկիւղ էր ազդում վերայից անցնողին, այլ և երբեմն-երբեմն քանդւելով, բոլորովին ընդհատում էր հաղորդակցութիւնը շրջակայ գիւղերի հետ։ Այսպէս երբ անցեալ տարի բոլորովին քանդւեցաւ, հիւանդանոցի վարչութիւնը այդ մասին գանգատւեց հիւանդանոցի գլխաւոր վերատեսուչ գեներալ Գուրչինին։ Գեներալի միջնորդութեամբ կառավարութեան հրամանով մի քանի ճարտարապետներ եկան Սուրամ, որոնք առաջարկեցին նորից փայտեայ կամուրջ շինել, 4000 ր. ծախսելով։

Այս տեսնելով տեղւոյս երկաթուղու ծառայող անգլիացի ինժինէր պ. Հենրիկոս Արչիբալդ Մուատը՝ առաջարկեց 1400 ր. շինել երկաթեայ կամուրջ։

Իշխանութիւնը սկզբում վարանեց յանձնել պ. Մուատին կամուրջի շինութիւնը, բայց յետոյ, անցեալ տարի հոկտեմբերին յօժարեցաւ՝ ժամանակամիջոց որոշելով։

Պ. Մուատը խնդրելով երկաթուղու ընկերութիւնից կամուրջի երկաթները գործի սկսեց և գրեթէ մի ամսում բոլորովին վերջացրեց։

Կամուրջի երկարութիւնն է 24 արշին, լայնութիւնը 10 արշին, բարձրութիւնը 6 արշին, հիմքի խորութիւնը 4 արշին։ Կամուրջի մէջ տեղը շարուած են զալարամեխերով միացած չորս կարգ երկաթեայ սիւներ։ Կողքերում բարձրանում են երկաթեայ վանդակներ երկ-երկու լապտերներով, այս ու այն կողմերում երկարաձգվում են 80 արշին երկարութեամբ կրով և ցինկով ամրացրած սրբատաշ պատերը Սուրամի հասարակութիւնը ճանաչելով պ. Մուատի այդ հասարակաշահ գործը՝ ցոյց տուեց նրան իւր երախտապարտութիւնը ամսոյս 25-ին 'ի պատիւ նրա հանգանակութեամբ ճաշ տալով։ Ճաշից յետոյ ամբողջ հասարակութիւնը ոտքի կանգնեց և պ. Մուատին և իւր կնոջ առաջնորդելով գնաց նորաշէն կամուրջի վերայ կանգ առաւ։ Այդտեղ շամպանիայի շիշեր պարպելով ամենքը խմեցին պ. Մուատի և կնոջ կենացը և կամուրջի անունը «Մուատեան» անունով կնքեցին, պ. Մուատի այդ նորաշէն կամուրջի շինութեամբ Սուրամին և նրա շրջակայ գիւղերին արած լաւութեան համար։

Զ. Ս. Առխ.

ՇՈՒՇԻ. 18 մայիսի.—Ամբողջ 22 տարի է, ես այստեղի բնակիչ եմ, բայց երբէք չեմ գնացած թուրքաց թաղը. հետաքրքրութեան համար մի օր այցելեցի նրանց թաղը մի քանի ընկերներիս հետ։

Աւելորդ է ասել, որ թուրքաց թաղի տները բոլորովին անկանոն են և խառնիխուռն են շինուած. փոքրիկ դռներ և իւրաքանչիւր սենեակին մի մի փոքր լուսամուտ։ Շատ տների դրսի պատերը հաւասար են լինում գետնի մակերևոյթին։ Սովորաբար ամբողջ թաղի տները միմեանց կպած են այնպէս, որ ցանկացողը շատ հեշտութեամբ կարող է շրջագայել բոլոր կտուրների վերայ։ Թուրքաց տան յատակը թէև օրը մի քանի անգամ մաքրվում է, բայց ծխից խաւար սևացած պատերը և առաստաղը տարին մի անգամ է մաքրվում, իսկ մնացած ժամանակները սարդերը ազատ գործում են իրենց ոստայնները. Որովհետև թուրքերը իրենց տան պատերը շարում են հասարակ, անձև և անտաշ քարով, թողնելով պատերում հազարաւոր խոշոր խոռոչներ՝ միների և զանազան միջատների բնակարաններ. կան թուրքեր, որ անճարութիւնից զարդում են սենեակի մի անկիւնում կաւէ կարասիքն, իսկ մէջ տեղում հացի թոնիրն է լինում թաղած. իւրաքանչիւր օր այդ թոնիրը վառելու ժամանակ, տունը ծխով լցվում է. տան կաւէ կարասիքը սև մրով ներկւում, պատերը և առաստաղը սևացնում, Շատ տեղեր մի և նոյն սենեակում (երբեմն պատահած հիւրերն էլ) մինչև երեք չորս եղբայր իրենց ամուսիններով և մի քանի մանր ու խոշոր երեխաներով միասին քնում են։ Ի՛՞նչ կարծիք, որ տեղաշորերն էլ թաց գետնի վերայ են գցւում, որովհետև մահճակալի վերայ քնելը դեռ մի հազուագիւտ երևոյթ է թուրքերի մէջ։

Շատերի տեղաշորերի վերայ երկու տարուայ կեղտ կարելի է նշմարել. սովորական հագած հասարակ կտաւի շապիկը հազիւ երկու ամիսը մի անգամ է լուացվում, իսկ մնացեալ հանդերձեղէնները տարին մի անգամ. այս պատճառով թուրքերից շատերը օրուայ մեծ մասը իրենց մարմինը քորելով և... են անցկացնում, թիւրքերը իրենց մարմնի վերայից միջատները հեռացնելու համար մի որոշ սովորութիւն էլ ունին։ Երեք շաբաթը կամ ամիսը մի անգամ տանտիկինը թոնիրը լաւ վառելուց յետոյ մի քիչ որ հովանում է, իսկոյն բղավում է տանեցոց բոլորին, հանել է տալիս շապիկները և սկսում է առանձին առանձին շորերը թափ տալ թոնիրում, այն ժամանակ սկսվում է թոնիրում միջատների ճըրթ-ճըրթոցը, որոնք կարկուտի նման թափվում են վառած կրակի վերայ և մի զզուելի հոտով տունը լցնում։ Այսպիսի զզուելի բաներին թիւ և համար չկայ։

Այս դէպքերն պատահում է միջին դասակարգում։

Թուրքաց սնունդը բոլորովին բացի միակերպ լինելուց, շատ էլ հասարակ է, տարին մի քանի անգամ հազիւ մի փունդ պանիր ու իւղ են առնում ու տանում տուն, իսկ մնացեալ օրերն մի 3 կոպէկի հաց ու պանիր են առնում ու ուտում դուքանի մի անկիւնում։ Թուրք կանայք դեռ ևս խիստ ստրկութեան մէջ են, դեռ ևս երեսը հաստ չադրով ծածկուած, իրաւունք չունին տանեցոց հետ խօսելու, դրանց հետ ճաշելու, մօտը նստելու։

Եթէ թիւրքերի տներում այդպիսի կեղտոտութիւն և անմաքրութիւն է տիրում, դրանց փողոցներն էլ պակաս կեղտոտ չեն. ինչ գարշահոտութիւններ ասէք, որ նեղացնում չլինին անցնողին. աղբ, կերակուրի մնացորդ և այլ և այլ հոտող և գարշելի գազեր տարածող նիւթեր անընդհատ թափվում են թիւրքական փողոցներում և մնում են։ Հայերի թաղը համեմատելով թուրքաց թաղերի հետ, անհամեմատ լաւ է. տները մեծ մասամբ շինուած են եւրոպական ձևով, պատուհանները մեծ մեծ, յատակը և առաստաղը մաքուր, այնպէս որ մարդը գոհ է մնում. իսկ փողոցների մասին կարելի է շնորհակալ լինել պրիստաւ պ. Յովսէփ բէկ Մելիք Օսեփեանցից, որ աշխատութիւն չէ խնայում փողոցները մաքուր պահել տալու համար։

Թէ արտաքին տեսքով, թէ մաքրութեամբ և թէ կլիմայական պայմաններով հայոց թաղը ըստ ամենայնի գերադասելի է թիւրքականից։

Արդ չորրորդ տարին է որ Բէալական դպրոցը գտնվում է թրքաց թաղում, ուր հասնելու համար հայ սաները պէտք է մի վերստ ճանապարհ գնան և ենթարկւին թրքական փողոցներում երևան եկող անբարոյական ազդեցութեան։ Եւ ինչեր չպիտի լսում լինին մատաղահաս հայերը այդ փողոցներից անցնելիս։

Ինչու չեն մտածում Բէալական դպրոցը հայոց թաղը տեղափոխելու վերայ, մանաւանդ, որ աշակերտների ստուար մեծամասնութիւնը հայ է։

Մի ամբողջ ամիս է որ հարցին են բարձրացրել տեղիս հայ վաճառականները իրենց մագազինները թրքաց թաղից հայերի թաղը տեղափոխելու մասին և այդ մասին դեռ մի որոշ վճռի չեն հասել։

Այստեղ թուրքաց թաղումը առևտուր անող զարմանալի վաճառականներ կան. դրանք յիսուն հազար րուբլու չափ ապրանքը թափում են, խանութները լքցնում ու երեկոյեան կողպում գնում տուն. մագազինների հեռաւորութիւնը իրենց տներից մէկ ու կէս վերստ է. բայց այդ՝ այդտեղի վաճառականները երկիւղից արդէն ժամը չորսին փակում են իրենց մագազինները։ Երևակայեցէք, որ այդ մագազինների մէջ կրակ ընկնի, մինչև որ հայոց թաղում բնակւող վաճառականը կ'իմանայ, մագազինները կամ հրոյ ճարակ կը լինին դարձած կամ կողոպտուած վերջացած, ուրեմն ինչու չտեղափոխուել հայոց թաղի ընդարձակ ու ամեն կերպ աւելի ապահով թաղի նոր ու մեծ մագազինները, ուր կարելի է և խանութները բաց պահել մինչև գիշերուայ 10-ը ժամը։ Բայց ինչ անես, որ մերոնք մեծ բաների վերայ խորհելու ու միանգամից ամեն բան անելու վերայ մտածելով խեղճպէս դանդաղ և անշարժ են մնում։

Մ. Գ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Մայիսի 19-ից (յունիսի 1 «Neues-Wien Aleudbl.» լրագրին Կ. Պօլսից գրում են, թէ վերջին օրերի դէպքերը

դուք այժմ այսքանը պէտք է գիտենաք, որ նա շատ քիչ բանով է տարբերվում աղքատից։

—Վա՛յ գոչեց անծանօթը, շատախօսներն գողերից աւելի վտանգաւոր են լինում։ Մինչև վաղը դուք կ'ստանաք այդ գումարը։

Այս ասելով նա հանեց գրպանից մի թերթ թուղթ, մատիտ և շուտ դառնալով դէպի սեղանը՝ սկսեց շտապով գծագրել թղթի վերայ մարդու ձեռք։ Նա պատկերացրեց նրան անհամբեր—տարածած, որպէս թէ նա այդ րոպէին պատրաստ էր կանչելու միանգամից ոսկէ դրամների մի ամբողջ հեղեղ։ Ձեռքը, այսպէս ասած, ագահութեան զգալի արտայայտութիւն ունէր և մատներից մէկի վերայ նկարուած էր մի մեծ մատանի։

—Դա իմ ձեռքն է, բացականչեց Ջիաննետինին։

—Միևնոյն ժամանակ և ձեր պատմութիւնը, ասաց նկարիչը և նկարը տալով Անտօնիօին, պատուիրեց տանել այն սուրբ Մարկոսի հրապարակի վերայ գտնվող Petro Benvolo դրամատան և փոխարէնը պահանջել վեց հարիւր պիստոլ։

—Վեց հարիւր պիստոլ, գոչեց հիւանդապահը—ես դրան մէկ պիստոլ անգամ չէի տայ։

Առանց մի բառ արտասանելու՝ արուեստագէտը երեսը շուռ տուեց նրանից։ Մակուկավարը նկարը վեր առաւ և հարցական կերպով նայեց Մարիամին։ բայց նրա թոյլ և բարութեամբ լի աչքերի մի հայեացքը հանգստացրեց նրան և նա դուրս գնաց սենեակից, որպէս զի յանձնարարութիւնը կատարէ։

Ձեռքերը ծալելով և ծնկները վերայ տալով մեր արուեստագէտն սկսեց անդ ու դարձ անել սենեակում, երբեմնապէս քննական հայեացք ձգելով երիտասարդ աղջկայ վերայ, որ, զղջալով իւր յանցանքը նստած էր մտածմունքների մէջ խորասուզուած։ Իսկ Ջիաննետինին, ինչպէս երևում էր, չէր կարողանում թօթափել իւր վերայից այն տարօրինակ ազդեցութիւնը, որ արել էր նրա վերայ անծանօթ այցելուն. նրա բնաւորութեանը յատուկ յանդգնութիւնը անյայտացել էր. և այդ առաջին անգամն էր, որ նա իւր կեանքում չէր համարձակվում ընդհատել սիրոյ լռութիւնը։

Անցաւ մի ամբողջ ժամ։ Վերջապէս լսուեցան շտապոյթ և ուրախ քայլերի ձայներ, իսկոյն յայտնուեցաւ Անտօնիօն՝ ձեռքումը բռնած մի փոքրիկ քսակ և նամակ։ Քսակի մէջ զրնգում էր նկարչի պահանջած գումարը. իսկ նամակում, որն ուղղած էր արուեստագէտին, խանութպետը խնդրում էր պատուել նրան իւր այցելութեամբ։

—Առէք այս փողերը և համրեցէք, ասաց անծանօթը՝ քսակը շպրտելով դէպի Ջիաննետինին։

Անտօնիօ Բարբերիգօն ուրախութիւնից յուզուած և զմայլմամբ կանգնած էր իւր բարերարի առաջ։

—Դարձեալ մի ողորմութիւն եմ խնդրում ձեզանից, ասաց նա։ —Ո՞վ էք դուք։

—Ի՞նչ հարկաւոր է ձեզ իմանալ այդ։

—Ի՞նչպէս թէ՝ ինչ հարկաւոր է, գոչեց մակուկավարը, չափ ու չափ հարկաւոր է, դա ինձ համար մեծ նշանակութիւն ունի։ Ասացէք ինձ ձեր անունը, սինիօր, որ ես կարողանամ սիրել և պատուել նրան մինչև կեանքիս վերջին օրը։

—Մարդիկ ինձ անուանում են Միքէլ Անջէլօ։

—Միքէլ Անջէլօ, հիացած կրկնեց Անտօնիօն, ծունկ չոքելով իւր հայրենակից—հանճարի առաջ։

Արուեստագէտն իսկոյն վեր բարձրացրեց նրան և նրա ձեռքն առաւ իւր ձեռքերի մէջ։

—Այժմ հերթն իմն է մի բան խնդրելու ձեզանից, ասաց նա.—Թոյլ տուէք ինձ կենդանագրել կտաւի վերայ Մարիամի հրաշալի գծագրութիւնը։

Երիտասարդ աղջիկը մօտեցաւ. նա ոչինչ չէր կարողանում ասել, միայն նկարչի ձեռքը սեղմում էր իւր ձեռքերի մէջ և մօտեցրեց նրան իւր շրթունքներին. այդ րոպէին նրա զոյգ աչքերից երկու կաթիլ արցունք գլորուեցան արուեստագէտի ձեռքի վերայ. Միքէլ Անջէլօն իսկոյն դուրս խլեց իւր ձեռքը Մարիամի ձեռքերի միջից և շուռ եկաւ, որպէս զի ծածկի իւր ներքին յուզմունքը։

⁂

Այդ օրից անցաւ քանի տարի և մենք Անտօնիօ Բարբերիգօին՝ երբեմն համեստ մակուկավարին, հանդիպում ենք Մարիամի բազդաւոր ամուսինը դարձած՝ վենետիկեան հասարակապետութեան գեներալի պաշտօնում։ Չնայելով իւր ապահով և գոհ վիճակին՝ նա երբէք չէր մոռանում իւր վաղանցուկ երախտապարտութիւնը և, ինչպէս նա, այնպէս էլ նրա կինը միշտ անկեղծ շնորհակալութիւն և խորին յարգանք էին տածում դէպի հանճարաւոր նկարիչը։

Իսկ ինչ վերաբերում է ժլատի ձեռքի էսքիզին՝ նա նապօլէօնեան բանակին պատկանող մի զինւորի ձեռքով դուրս տարուեցաւ Իտալիայից և զետեղուեցաւ Պարիզի Լուվրում, բայց դժբաղդաբար, 1814 թուականի արշաւանքների ժամանակ կորաւ։ Չնայելով դրան՝ այդ հրաշալի էսքիզի չարժաւթը, նրա ստեղծելու պատմութիւնը դեռ մինչև այժմ էլ գոյութիւն ունի և միշտ պատմվում է վենետիկեան աւանդութիւններում։

(Թարգ).

Աղէք. Ծատուր.

մեծ երկիւղ պատճառեց այստեղի պաշտօնական շրջաններին, բայց մեր պետական մարդկիների քէֆը… աւելի շատ են վրդովում Ռուսիայից ստացած լուրերը, քան թէ յունական ընդհարումները սահմանագլխում։ Կիսով չափ դադարած վիճաթափութիւնը օսմանեան բանկից փոխառած գումարի շնորհիւ, նորից սկսուեցաւ։ Կառավարութիւնը թնդանօթների համար արտիլերիայի 1000 ձի գնելու պայման է կապել և պատերազմական մինիստրութիւնը բանակցութիւններ է անում Գերմանիայում ջրասոյզ նաւեր գնելու մասին, իսկ Անգլիայում հեծելազօր և թնդանօթաձիգ զօրքերի համար ձիեր գնելու մասին։ Այսօր Ռումէլիայից և Բօլղարիայից լուրեր ստացուեցան, որ պանսլաւոնական կուսակցութիւնը իշխան Աղեքսանդրի և նրա կառավարութեան դէմ անկարգութիւններ է գործել։ Մօտերումս սուլթանը քաղաքավարութեան նշանաւոր մի ցոյց տուաւ գերմանական կայսրին։ Անցեալ շաբաթ օրը մեծ ճաշկերոյթ կար Իլդիզ-Քիօշ արքունիքում, ուր հրաւիրուած էին իւր ամուսնու հետ գերմանական դեսպանատան ֆօն-Րադովիցը, ամերիկեան դեսպան Կօկսը և ջութակ ածող Վիլհելմին։ Ճաշից յետոյ սուլթանը հրաւիրեալների հետ առանձնացաւ մի սենեակ և խնդրեց պրոֆեսոր Վիլհելմինից նուագել ջութակի վերայ գերմանական ազգային հիմնը։ Հէնց որ հնչուեցան «Heil dir im Siegerkranz»-ի առաջին հնչիւնները, սուլթանը ոտքի կանգնեց և ամբողջ հիմնը կանգնած լսեց։

—

Մայիսի 27-ից (8 յունիսի) Լօնդօնից հեռագրում են, թէ պատգամաւորների ժողովը իւր երեկուայ նիստում, երկրորդ ընթերցումի ժամանակ վերջնականապէս մերժեց Իռլանդիայի ինքնավարութեան մասին Գլադստօնի կազմած օրինագիծը։ Տօրիան կուսակցութիւնը ընդդէմ օրինագծի 252 ձայն տուեց, իսկ ազատականները 89-ը։ Մինիստրութիւնը ճգնաժամի մէջ է։ Մարկիզ Սալիսբուրին, 'ի դէպս եթէ Գլադստօնը հրաժարուի պաշտօնից, ինքն էլ է հրաժարվում, 'ի նկատի ունենալով ներկայ հանգամանքները, ընդունելու իւր վերայ նոյն պաշտօնը և կազմակերպելու նոր մինիստրութիւն։

—

Մայիսի 24-ից (5 յունիսի) «Indep. Belge» լրագրին Լօնդօնից հեռագրում է հետևեալը. «Այստեղի քաղաքական շրջաններում հաւատացնում են, թէ Պարնելը պատրաստվում է կարճ ժամանակում հրաւիրել իւր ընկերներին և բարեկամներին Դուբլինում մի մեծ միտինգ գումարելու, որի նպատակը կը լինի շնորհակալութիւն և երախտագիտական զգացմունք յայտնելու Գլադստօնին, նրա համար որ նա ամեն ջանք գործ է դնում յօգուտ Իռլանդիայի։ Ինչ վիճակի էլ որ ենթարկուի օրինագիծը, այնուամենայնիւ պարնելականները մտադիր են ստորագրութիւն բանալու և Գլադստօնին Դուբլինում արձան կանգնեցնելու։

—

Լօնդօնի բոլոր լրագիրները, բացի «Daily News»-ը, Իռլանդիայի օրինագծի մերժումի առթիւ ցոյց են տալիս իրենց լիովին հաւանութիւնը և կարծիք են յայտնում, որ նոր ընտրութիւններն էլ նոյն անյաջող վճիռը կը կայացնեն Գլադստօնի համար։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Խելացի շուն։ Ներկայ տարուայ մայիսի ցուրտ օրերում մի իրաւաբան–ուսանող, երկար ժամանակ նստելով իւր ընկերների հետ գարեջրատանը և այնտեղից դուրս գալով յետոյ, աջ ու ձախ գլորուելով, դիմեց դէպի տուն, և իրեն ուղեկցում էր նրա հաւատարիմ շուն Կարօն։ Նա յաջողութեամբ հասաւ մինչև փողոցի այն անկիւնը, ուր գտնվում էր նրա բնակարանը։ Այստեղ նրա հետ մի դժբախտութիւն պատահեց, այն է՝ վայր ընկաւ և երևակայեց, թէ պառկած է տանը, իւր անկողնի մէջ։ Կարօն մի քանի ժամանակ հսկեց իւր տիրոջ վերայ, որ չմնասուի, բայց յետոյ մտածեց, որ ինքը և իւր տէրը այդ թաց քարայատակի վերայ կարող են մրսել սաստիկ անձրևից, ուստի վազեց դէպի տուն, ուր բնակւում էր նրա տէրը և սկսեց աղէտալի կերպով հաչել և կռնծկռնծալ դռնապանի պատուհանի տակ։ Բայց ոչ ոք դուրս չեկաւ. այն ժամանակ շունը ցատկեց և բոլոր մարմնովը դիպաւ պատուհանի ապակուն։ Ապակին ջարդուեցաւ և փշուր փշուր եղաւ։ Տանտէրը դուրս վազեց դէպի փողոց և տեսաւ անկիւնի մօտ երկու սև առարկաներ՝ ուսանողին և շանը։ Ուսանողը ցրտից բոլորովին սառել էր, նա վերցրեց նրան և տարաւ տուն։ Շունը ուրախացած և պոչը շարժելով, վազում էր նրանց յետևից։ Ցատկելով պատուհանի վերայ, Կարօն վիրաւորել էր իւր ցաւկը և ոտը, որոնցից արիւն էր հոսում։ Տեսնելով արիւնը, տանտէրը իմացաւ, թէ ով է պատուհան կոտրողը։ Հետևեալ օրը ուսանողը յայտնեց, թէ որովհետև ինքը գիշերները միշտ ուշ տուն գալու ժամանակ սովորութիւն է ունեցել թակել պատուհանը, ուստի շունն էլ նոյնը տեսնելով, հետևել է նրա օրինակին։ Շնորհիւ իւր հաւատարիմ շան, ուսանողը ոչ մի հիւանդութիւն չստացաւ, բայցի հարբուխից։

***

Բուսաբանական այգիների թիւը.— Մօնրէալի (հիւսիսային Ամերիկայում) բուսաբանական այգիների բիւրօյի հաշւով ամբողջ երկրագնդիս վերայ բուսաբանական այգիների թիւը հասնում է 197. որանցից 34-ը գտնվում է Գերմանիայում, 25-ը Իտալիայում, 20-ը Ֆրանսիայում, 12-ը Մեծ Բրիտանիայում և Իռլանդիայում, 6-ը Արևմտեան Հնդկաստանում, 5-ը Միացեալ Նահանգներում։ Սրանցից միայն 10-ը մասնաւոր անձինքների ձեռնարկութիւն են, իսկ մնացածը տէրութիւնների։ 180 միշտ բաց է հասարակութեան առաջ, իսկ 17 միայն կիրակի օրերը, այն էլ յաճախորդների։

***

Գարնան տօնախմբութիւնը Վիեննայում։ Մայիսի 17-ին (29) կատարուեցաւ Պրատերում «գարնան տօնախմբութիւնը», որը կոչվում է նաև ծաղկեայ տօնախմբութիւն (Corso)։ Եղանակը գեղեցիկ էր։ Այս օրուայ ժամի 3-ից սկսած մինչև գիշեր Պրատերշտրասսէ և Պրատերալլէ փողոցներումից ու դարձ էին անում Վիեննայի արիստոկրատների և երևելի անձանց կառքերը, զարդարուած գոյնզգոյն և տեսակ տեսակ ծաղիկներով։ Երբ եկան թագաժառանգը և իւր ամուսին Ստէֆանիան, ժողովուրդը դիմաւորեց նրանց կեցցէներով և ուրախալի աղաղակներով։ Իշխանուհին հագած ունէր վարդագոյն հագուստ, զարդարած ամենահազուագիւտ ծաղիկներով, ինչպէս և նրա գլխարկը և հովանոցը։ Պրատերի բոլորակ հրապարակի վերայ նրանց դիմաւորեց մասնաժողովի նախագահ իշխան Տրաուտմանսդօրֆը ընծայեց իշխանուհուն զամբիւղներից և թէյէ վարդերից հիւսած մի հոյակապ փունջ։ Այս օրուայ հերոսուհիներից մէկն էլ իշխանուհի Պօլինա Մետերնիխն էր, որ կազմել էր այդ բարեգործական տօնախմբութիւնը և որի շնորհիւ գարնան բոլոր ծաղիկները համարեա թէ գործադրուեցան պսակների և փունջերի վերայ։ Իշխանուհուն ընդունեցին ուրախալի աղաղակներով և բուռն ծափահարութիւններով։ Նրա հետ նստած էր կառքում կոմսուհի Կինսկին։ Կառքը ամբողջապէս լի էր կարմիր և դեղին վարդերով։ Մի գործարանատիրոջ կառքում փայլում էր ծաղիկներից հիւսած մի քնար, որի մի կողմում գրուած էր «կեցէ կայսերական տոհմը», իսկ միւս կողմում «կեցցէ իշխանուհի Մետտերնիխը»։ Բազմաթիւ հիւրանոցների մէկի ճակատում կպցրած էր մի վահան հետևեալ վերնագրով. «S'gibt nur a Keiserstadt s'gibt nur a Wien S'gibt, nur a Fürschtin-Metternich Paulin» (Մի է մայրաքաղաքը, մի է Վիեննան, մի է իշխանուհի Պաւլինա Մետտէրնիխը)։ Վերջապէս 9 ժամին, Ջախերի պարտիզում, մասնաժողովի անդամները շրջապատեցին իշխանուհուն և երգեցին սերենադան։ Բացի թագաժառանգ զոյգը, տօնախմբութեանը ներկայ էին նաև էրցհերցօգ Կարլօս-Լիւդովիկոսը, էրցհերցօգուհի Մարիա-Թէրեզան, Ֆրանց-Ֆերդինանդ և Օտտօն էրցհերցօգները և Կօբուրգեան իշխան և իշխանուհին։ Կառքերի մէջ իւր վերայ ուշադրութիւն էր դարձնում մանաւանդ բարօն Նաթանիէլ Ռօշիլդի կառքը, զարդարած չորս կողմից չքեղ և գոյնզգոյն ծաղիկներով, այնպէս որ ձիերն անգամ չէին երևում ծաղիկների շատութեան մէջ։ Բացի արիստոկրատները, տօնախմբութեանը ներկայ էին և բոլոր արիստոկրատիկական ամբողջ աշխարհը։ Տիկին Պաւլինա Լուկկան գտնվում էր իւր ամուսին բարօն Վայլգօֆինի հետ մանուշակներով և վարդերով զարդարուած կառքում։ Բոլոր կառքերը լի էին ծաղկեայ փափլիկ փունջերով և չքեղ պսակներով։ Այդ օրուայ տօնախմբութիւնից, ինչպէս հաղորդում է «Fremdeublatt» լրագիրը, գոյացաւ 80,000 ֆլօրին արդիւնք։

***

Մօտ օրերումս Պարիզի դատարանը ազատեց գժանոցից խելքով բոլորովին առողջ և 60 միլլիօնի տէր Միստրալ անունով մի մարդու, որին փակել էին գժանոցում դեռևս 1839 թ.։ Զնայելով պարլամենտի կայացրած վճռի դէմ տուած դատարանների բոլոր բողոքների և պահանջների վերայ, առողջ մարդը 47 տարի մնաց գժանոցում։ Շատ տխուր և հաստատուն խելք է հարկաւոր, որ այդքան երկար տարիներ կարողանայ դիմանալ փորձանքների և չենթարկուի վնասի։ Այս դժբաղդ մարդու պատմութիւնը շատ հետաքրքիր է։ Սալէս քաղաքացի հարուստ գործարանատիրոջ որդի է, Միստրալ անունով, որ իւր ընտանեկան չահերի պատճառով ճանապարհորդեց ամբողջ Եւրոպա և Վարշաւայում սիրահարուեցաւ երգչուհի Գօմբրօվսկու վերայ, որ մի կոմպոզիտօրի դուստր էր և չափազանց գեղեցիկ ու բարոյական։ Նրա միլլիօնատէր հայրը թոյլ չտուեց որդուն ամուսնանալու չքաւոր օրիորդի հետ, բայց Միստրալը, կարծելով, թէ հայրը անձամբ ծանօթանալով իւր սիրուհու հետ, կը փոխէ, ուստի ամուսնացաւ և բերեց կնոջը Ֆրանսիա։ Հայրը երկուսին էլ դուրս արեց տանից և այնքան արեց, որ մինչև անգամ նրանց արտաքսեցին քաղաքից։ Երիտասարդ զոյգը ընկնելով չքաւորութեան մէջ, քիչ մնաց, որ մուրացկանութեամբ պարապէր. թէ մարդը և թէ կինը երգում էին փողոցներում և այդպիսով իրենց համար օրական պարէն հայթհայթում։ Կինը հիւանդացաւ և որդին զուր տեղը փորձեց մեղմացնելու իւր հօր սիրտը։ Վերջինս մի հնարքով բժշկից վկայական հանեց և յայտնեց, թէ իւր որդին խելագարուած է, ուստի ոյժով բռնեցին նրան փողոցում և տարան գժատուն։ Սրանից յետոյ դատարանով բաժանեց ամուսիններին, որից յետոյ թշուառ և հիւանդ կինը արտաքսեցին Ֆրանսիայից, և մինչև այսօր էլ յայտնի չէ, թէ ինչ եղաւ և որտեղ է գտնվում։

Ծերունի Միստրալը շուտով մեռաւ, թողնելով իւր որդուն ահագին կարողութիւն։ Երիտասարդ Միստրալի հօրեղբայր Բերնար Միստրալը և խորթ եղբայր Պրօվանսի յայտնի բանաստեղծ Միստրալը խնամակալներ նշանակուեցան։ Նրանք, կամենալով օգտուել իրենց ազգականի կարողութեամբը, հանգիստ թողին նրան գժանոցում, ուր նա մնաց 47 տարի։ Սրանից 15 տարի առաջ, թշուառի հեռաւոր ազգականներից Ֆուրնիէ անունով մէկը, շատ աշխատեց դատարաններով ազատելու բոլորովին առողջ մարդուն, սակայն զուր անցան նրա աշխատութիւնները։ Հինգ տարի սրանից առաջ մամուլը սկսեց խօսել յօգուտ թշուառ Միստրալի. պարլամենտը երկու անգամ յանձնարարեց Ներքին գործերի մինիստրութեանը քննութիւն անել, բայց մինիստրութիւնն էլ բարձի թողի արեց այդ գործը, և 60 միլլիօն ֆրանկ կարողութիւն ունեցող խեղճ Միստրալը շարունակեց տանջուել գժանոցում, այն էլ աղքատների բաժանմունքում։ Վերջապէս Լիսի դատարանը պահանջեց, որ հրապարակաւ բժշկական քննութեան ենթարկեն կարծեցեալ հիւանդին, որից յետոյ վճռեց ազատել նրան գժանոցից, Այժմ նա ազատ է և 70 տարեկան ծերունի հասակում սկսել է կառավարել իւր միլլիօնների կարողութիւնը։

***

Երևելի թզուկ։ Մարդկային ցեղի այս տեսակ հրէշները մի ժամանակ մեծ յարգ ու պատիւ ունէին։ Ֆրանսիայում XVI. դարում թագաւորական թզուկը կրում էր le nain de sa Majeste տիտղոսը և չնայելով, որ 1662 թ. այդ տիտղոսը ոչնչացաւ, սակայն թզուկները դարձեալ գոյութիւն ունէին ֆրանսիական արքունիքներում։ Պատմութեան մէջ յայտնի և վերջին թզուկն էր Րիշբուրը (Richebourg)։ Նա ծնուել էր 1769 թուականին. Դեռ պատանի հասակում նա ծառայութեան մտաւ Լիւդովիկոս-Ֆիլիպպոսի մայր Օրլեանի հերցօգուհու մօտ։ Արքունիքում նա կրում էր Sommelier (հանդերձապահ) տիտղոսը։ Չնայելով, որ նա իւր պաշտօնը համարեա թէ չէր կատարում, սակայն ձևի համար պահում էին նրան արքունիքում։ Նա երևելի էր իւր հասակի փոքրութեամբը, որ հասնում էր մօտ 65 սանտիմետրի (14½ վերշոկ)։ Բոլորովին նուիրուած լինելով իւր բարերարուհուն, ամեն կերպ աշխատում էր ցոյց տալ նրան իւր հաւատարիմ ծառայութիւնը և շնորհակալութիւնը, մանաւանդ յեղափոխութեան ժամանակ, երբ նրան յանձնում էին կարևոր հեռագիրներ տեղ հասցնելու։ Այդպիսի դէպքերում նրան հագցնում էին երեխայի շորեր, չնայելով, որ այդ ժամանակ նա 25 տարեկան էր, և կատաղի ամբոխի միջով ծծմայրը անց էր կացնում նրան։ Հեռագիրները դրվում էին նրա մանկական գլխարկի մէջ, իսկ երբեմն էլ կատարում էր բերանացի յանձնարարութիւններ։ Վերջին 30 տարիներում նա միայնակեաց և փակ կեանք էր վարում, երբեք չէր դուրս գալիս իւր բնակարանից և չէր երևում իրեն հետաքրքրութեամբ նայողներին։ Ամեն մի օտար մարդու ձայն նրան սոսկում և սարսուռ էր պատճառում։ Ընտանեկան շրջանում նա շատ ուրախ էր ապրում։ Նա մեռաւ 1858 թ. և մինչև 'ի մահ օրլեանեան հերցօգներից ստանում էր տարեկան 3,900 ֆրանկ պենսիա։ Միայն յայտնի չէ, արդեօք Րիշբուրը ամուսնացած էր, ունէր զաւակներ, թէ ոչ։

***

Չինական գիտնական Վանգ-սէ-Գէ-ուն անզգուշութեամբ չինական սովորական բառարանում մի քանի տեղեր փոփոխել է։ Այդ պատճառով նա դատի ենթարկուեցաւ և դատաւորները կայացրին հետևեալ վճիռը. Մենք տեսնում ենք, 1) որ Վանգ-սէ-Գէ-ուն յանդգնել է պարապելու Կօն-չի կոչուած բառարանով և իւր յանդգնութիւնը հասցրել է մինչ այն աստիճանի, որ կամեցել է փոփոխութիւններ անել այդ հոյակապ գրքում. 2) Վանգ-սէ-Գէ-ուի գրքի յառաջաբանի մէջ մենք սարսափած նկատեցինք, որ նա գրել է Կօնֆուցիոսի նախկին անունը, այդպիսի մի գործողութիւնից մենք սոսկացինք. 3) Վանգ-սէ-Գէ-ուն իւր բանաստեղծութեան և իւր ընտանեաց ազգաբանութեան մէջ հաստատում է, որ նա ծագել է Վէնգ-Սէից։ Ուստի մենք, համարելով Վանգ-սէ-Գէ-ունին իբրև տէրութեան դաւաճան, կայացրինք հետևեալ վճիռը.—համաձայն երկրի սովորութեան՝ այսպիսի յանցաւորներին հարկաւոր է մաս մաս կտրատել, նրա գոյքը յատկացնել տէրութեանը, որդոց և ազգականներին որոնք լրացրել էին 16 տարին, պատժել, իսկ 16 տարուց փոքր որդոցը և կանանց յանձնել կայսրութեան իշխաններից մէկին, ինչպէս ստրուկներ։ Բօգդի խանը (չինական կայսրը) փոքր ինչ մեղմացրեց Վանգ-սէ-Գէ-ունի պատիժը և փոխանակ մաս մաս կտրատելու, հրամայեց միայն գլխատել։ Որդոց և կանանցը կը պատժեն աշնանը։

***

Սրանից մի քանի տարի առաջ վախճանուած Ֆլօրէնտինօ անունով յայտնի թատերական և երաժշտական մի կրիտիկոս դերասանների համար գներ (такса) նշանակեց, և մի մի օրինակ ուղարկեց նրանց, իբրև ձեռնարկ և հրահանգ։ Նրա քննադատութիւնների մէջ շատ անգամ պատահում էին հետևեալ նախադասութիւնները. «Այս դերասանուհին շատ է խոստանում, տեսնենք, կը պահպանէ՞ իւր խոստումը, թէ ոչ»։

Դերասանների արժանաւորութեան համար հետևեալ գներն էր նշանակել. «Առաջին դեբիւտը տուեց, լաւ յոյսեր խոստանալով»—1 ֆրանկ. «Գեղեցիկ յիշողութիւն ունի»—50 սանտիմ. «Իւր ուզած դերն չէ յանձն առել»—1 ֆր. 25 սանտիմ. «Երբէք և ոչինչ չէ փչացնում»—30 ֆր. «Դարձրեց իւր վերայ «Comedie Française» թատրոնի վերատեսչի ուշադրութիւնը»—15 ֆր. «Երկարատև բացակայութիւնից յետոյ, բաւարար ընդունելութիւն ունեցաւ»—6 ֆր. «Հրաւիրուած է Լիօն»—5 ֆ. «Հրաւիրուած է Նանտ»—2 ֆր. 50 սանտիմ. «Բաւականաչափ օգնեց հեղինակի յաջողութեանը»—6 ֆր. «Արժանացաւ ամբողջ հանդիսականների ծափահարութեանը»—12 ֆր. «Ձեռնտու պայման կապեց»—20 ֆր. «Ներկայացումից յետոյ թատրոնի վերատեսչը աւելացրեց դերասանի ռոճիկը»—30 ֆր. «Երկաթուղու գնացքի խորտակուելուց վնասուած մի երկաթուղու ծառայողի զաւակի որդեգրել է»—10 ֆր. «Ինչպէս լսվում է, ամուսնանում է Սեն-Ժերմեն արվարձանից մի օրիորդի հետ»—20 ֆր. «Բանկիր դստեր հետ»— 10 ֆր. «Սկզբից ուսումնասիրեց բժշկականութիւնը»—3 ֆրանկ եայլն։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՆՈՐ ԴԱՐ»-Ի ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

2 Յունիսի

ՄԻՒՆԽԷՆ. Երեկ Բավարիայի թագաւորը, Բերգ ամրոցի մօտ զբօսնելու ժամանակ, իրեն ձգեց լճի մէջ և խեղդուեցաւ։ Թագաւորի ուղեկից բժիշկ Գուդդէնը ընկաւ ջուրը նրան փրկելու, բայց ինքն էլ խեղդուեցաւ։ Երբ երկու մարմինները ջրից հանեցին, երևեցաւ, որ Գուդդէնի երեսը ճանկըռտուած է, ինչպէս երևում է, թագաւորը ընդդիմացել է, չկամենալով ազատուել խեղդուելուց։ Բավարական երեք մինիստրներ գնացին Բերգ ամրոցը թագաւորի մահուան մասին արձանագրութիւն կազմելու։ Թագաւորի մարմինը շուտով կ'բերուի Միւնխէն։ Թագաւոր ընտրուեցաւ նրա եղբայր իշխան Օտտօն I-ը, իսկ խնամակալ մնում է իշխան Լուիտպօլդը։ Զօրքերը երդուեցան հաւատարիմ մնալ նորընտիր թագաւորին և խնամակալին։ Այսօր հրատարակուեցաւ արդէն յունիսի 27-ին բժիշկների կողմից տուած այն վկայութիւնը, թէ հանգուցեալ թագաւորը անբժշկելի կերպով խելագարուած էր։

3 Յունիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Սենատը քննութեան առնելով Ատօն Դերղանեանի և միւսների գանգատը Թիֆլիսի դատարանական պալատի վըճռի դէմ, որոշեց, պալատի վճիռը ջնջել, յանձնելով գործը նոր քըննութեան համար պալատի միւս դեպարտամենտին, բացի այդ վըճռից դատարանական պալատին նըկատողութիւն անել քրէական դատարանական օրէնքի 265 յօդ. հիմանց վերայ։

Խմբագիր հրատարակիչ
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԳՆԱՑՔՆԵՐԻ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆԸ
«ԹԻՖԼԻՍ» ԿԱՅԱՐԱՆՈՒՄ.

Կառքեր, որոնք ճանապարհին գիշերելու կայարաններ ունին։

Թիֆլիսից դուրս են գալիս առաւօտեան 8 ժամին. Վլադիկավկաս գալիս են երեկոյեան 5 ժ.—11 րոպ. և 6 ժ»—43 րոպ. մէջը։

Վլադիկավկասից դուրս են գնում առաւօտեան 9 ժամին։ Թիֆլիս գալիս են երեկոյեան ժամի 4 և 44 րոպ. 5 ժ.—25 րոպ։

ცნობილი თავის თვისებით განარიდოს სხეულის ნაწილებს ოფლი, განსაკუთრებით ფეხის თითებს.

გალმანინი

ისყიდება აფთიაქებში, აგრეთვე ევროპის დიდი სახელმწიფოს ყველა ქალაქების მეწვრილმალეებთან. **უმთავრესი დეპო** იმყოფება ქარხანაში თვით გამომგონელს, აფთიაქის მქონე ფარმაციის მაგისტრს ვ. კარპინსკისთან, ელექტორალის ქუჩაზედ, № 350. დიდი კოლოფი **გალმანინისა** ღირს ვარშავაში 50 კაპ., პატარა 30 კაპ.

ერიდეთ სიყალბით გაკეთებულს

და მოითხოვეთ, რომ ყველა კოლოფთან დარიგების ფურცელი იყოს, თუ როგორ იხმარება და პარიჟის გამოფენის მედალი.

ვ. კარპინსკი, ფარმაციის მაგისტრი.

(Ц. 16884) 10—4



Д-РЪ Л. БЕРНАРДО-БЕРКМЕЕРЪ
ЗУБНОЙ ВРАЧЪ ВЪ МОСКВѢ
НА УГЛУ КУЗНЕЦКАГО МОСТА И ПЕТРОВКИ Д. ШОРИНОЙ,
ВХОДЪ СЪ ПЕТРОВКИ.

(Ц. 2077) 50—21

„НАРОДНАЯ ЦИТРА"

съ медалями совершеннѣйшій изъ существующихъ до сихъ поръ инструментовъ для любителей, на которомъ въ теченіи одного часа вполнѣ можно выучиться играть, рекомендуется цѣною въ 4, 5, 6 и 10 р. с.

МАГАЗИНЪ РОЯЛЕЙ ПИАНИНО
І. Ф. МЮЛЛЕРЪ.
Москва, Петровка, д. Волкова.
Упаковка и пересылка 1 р. 50 к. Альбомъ пьесъ 50 коп.
(Ц. 18007) 5—3

ԲԱԼԶԱՄ ԷՅԿԱԼԻՊՏԻ
Ա. ԷՆԳԼՈՒՆԴ ԿՕՍՄԵՏԻԿԻ

Բալզամ էյկալիպտի գործածութեան ժամանակ, արգելում է մազերը թափելուն, չափազանց ամրացնում է նըրանց արմատը, ոչնչացնում է թեփը և թարմացնում է գլխի մորթը։ Մի շիշի գինն է 1 ր. 50 կ. ճանապարհածախսով 2 ր.—2 շիշը ճանապարհածախսով 3 ր. 50 կոպէկ։ Կեղծ լինելուց զգուշանալու համար, խնդրում են պահանջել կարմիր թանաքով Ա. Էնգլունդի ստորագրութիւնը Ս. Պետերբուրգի կօսմետիկական Լաբորատորիայի մարկան։

Կարելի է ստանալ Ռուսիայի կայսրութեան մէջ բոլոր դեղատներում։ Գլխաւոր պահեստը ամբողջ Ռուսիայի համար գտնւում է Ս. Պետերբուրգում, Ա. Էնգլունդի Ս. Պետերբուրգի Կօսմետիկական Լաբորատորիայում, Լիտէյնայա № 38։

Թիֆլիսում ծախւում է կովկասեան դեղօրէից առևտրական ընկերութեան մէջ։

(Ц. 28121) 13—7

ԿՕՖԷ ՄՕԿԿՕ
Ս. ՍԻՈՒ ԵՒ ԸՆԿ.
(Ц. 4707) 51—15

ՇՕԿՕԼԱԴ
Ս. ՍԻՈՒ ԵՒ ԸՆԿ.
(Ц. 4657) 50—16



ՊԱՀԵՍՏ
ԿԱՐԵՄԵՔԵՆԱՆԵՐԻ
ԳՈՐԾԱՏՈՒՆ
ՖՐԻՍՏԵՐ ԵՒ ՐՕՍՄԱՆ
Նոր պատենտի տէր
կատարելագործուած
ԿԱՏԱՐԵԱԼ ԱՊԱՀՈՎԱՑՈՒՄՆ
Ծախւում է
ԺԱՄԱՆԱԿ ՏԱԼՈՎ
Միակ գործակալ՝ Լ. Ֆ. Աուֆէրման. Թիֆլիս
Երևանեան հրապարակ. տ. Տէր-Աստուածատրեանց
100—63

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի գնացքներ Մարսէլից մինչև Բաթում և յետ։

Չորեքշաբթի, յունիսի 11-ին «ԱՐՄԷՆԻԱ» (Armenie) շոգենաւը, նաւապետ Շեօլտ (Sheult), դուրս կը գնայ Բաթումից դէպի Տրապիզոն, Օրդու, Սամսոն, Կ. Պօլիս և Մարսէլ։

Տեղեկութիւնների համար դիմել ընկերութեան գործակալներին՝ Բաթումում պ. ԳԱՐԱՆԻՕՆԻՆ, Թիֆլիսում պ. ՐԷՆՕԻՆ, Նախկին գալերէյա Արծրունու № 103.

4—3

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

Այսու յայտնում է, թէ Երևանեան Հրապարակի վերայ քաղաքային տան մէջ գտնուած 12 և 13 համարներում ԵՐԿՈՒ ՄԱԳԱԶԻՆՆԵՐԸ, որոնց այժմ վարձած է Ֆունկը, վարձով է տալիս։ Պայմանների մասին տեղեկանալ քաղաքային վարչութեան կանցելարիայում։

3—2



Իսկական կարեմեքենաներ

„ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԶԻՆԳԵՐԻ" ՆԻՒ-ԵՕՐԿՈՒՄ
ԱՐԺԱՆԱՑԱԾ
աշխարհի մէջ կարեմեքենաների բոլոր ցուցահանդէսներում
ԱՄԵՆԱԲԱՐՁՐ ՊԱՐԳԵՒՆԵՐԻ
Կարեւոր ընկերներ տան տիկնինների և ազնիւ օգնականներ բոլոր արհեստաւորների համար
ԳՏՆՒՈՒՄ ԵՆ ՄԻՄԻԱՅՆ

Թիֆլիսում. Զինգերի ընկերութեան կենդրոնական պահեստում, Գօլովինսկի պրօսպեկտի վերայ, Միրիմանովի տան և նրա բաժանմունքների մէջ:
Բաթումում. Միքայէլեան փողոցում, Միրզա Աղալեանի տ. | Բաքուում. Պօլիցեյսկայա փողոցում, Թէրզի օղլու տ.
Քութայիսում. Բուլվարի դէմ, Զերեկիձէի տ. | Թեհրանում. Մարշ-Մէլքոնի դէմ, բուլվարի վեր. տ.
և նրանց ծանուցագրերով գործակալների մօտ

THE SINGER MFG. CO. N.Y.
TRADE MARK

ՄԻՋԻՆ ԵՒ ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՄԱՐ ԶԻՆԳԵՐԻ ԵՒ ԸՆԿ. ԳԼԽԱՒՈՐ ԳՈՐԾԱԿԱԼԻ ՄՕՏ
Գ. ՆԵՅԴԼԻՆԳԵՐ

ԶԻՆԳԵՐԻ ԿԱՐԵՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԽՈՇՈՐԱԳՈՅՆ ԱՌԱՒԵԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՀԵՏԵՒԵԱԼՆ ԵՆ

1) Մեքենաներն ունին ընդարձակ գործարան և համաշխարհային հռչակ: 2) Գները ամենաչափաւորներն են և միայն Զինգերի ընկերութեան մէջ: 3) Ամեն տարի ծախւում է մօտ 700,000 հատ: 4) Մեքենայի կատարելութեամբ չէ կարողացել նմանեցնել ոչ մի կարեմեքենայի գործարան: 5) Թէ մեքենաները և թէ նրանց օգնական գործիքները վերջ լաւանում և կատարելագործւում են: 6) Կարելի է ընտրել ամենամեծ գործածութեան, արհեստաւորների համար մեքենաներ նաև մասնագիտական մեքենաներ զինուորական հագուստներ կարելու համար: 7) Այս հաշւած մեքենաները ամեն մարդ հեշտութեամբ կարող է ձեռք բերել. Գինները կարող են, եթէ կամենումեն դրամը հետզհետէ վճարել ամսական քանակութեամբ, այն է շաբաթը, կամ ամսով և կամ ժամանակամիջոց ստանալ դրամը վճարելու համար: 8) Մեքենայի վերայ կատարեալ և հիմնաւոր տեղեկութիւն ձրի է տալիս ամենայն փորձառութեան համար:

Ց. Գ. Զինգերի և ընկ. բոլոր պահեստներում գտնւում են մեքենաներին պատկանելի գործիքները, ինչպէս են. ասեղներ, թել, մետաքս և այլ մեքենային պատկանելի իրեղէններ ամենաչափաւոր գներով:

60—12

Дозволено цензурою. Тифлисъ, 3-го Іюня 1886 г. Տպարան Մ. Դ. Ռօտինեանցի և ընկ. Типографія М. Д. Ротинянцъ и Kº Гол. пр., д. № 41